



Պատվաստանյութերի մշակման և արտադրման տարբեր փուլերում COVID-19-ի դեմ որոշ պատվաստանյութերում օգտագործվել են սաղմնային հյուսվածքից նախապես առանձնացված բջիջներ (որոնց հաճախ անվանում են սաղմնային բջիջներ), որոնցից որոշները նախապես ստացվել են արհեստականորեն ընդհատված (վիժեցված) սաղմից: Սաղմնային բջիջների օգտագործումը շատ նուրբ և կարևոր քննարկման նյութ է որոշ հավատացյալ համայնքների և անձանց շրջանում, որոնք մտահոգություններ ունեն այս եղանակով ստացված նյութերի կիրառման Էթիկայի հարցերի վերաբերյալ:

Յուրաքանչյուր անձի համար չափազանց կարևոր է տիրապետել ողջ համապատասխան տեղեկատվությանը՝ COVID-19-ի դեմ պատվաստումների վերաբերյալ ամբողջովին տեղեկացված որոշում կայացնելու համար: Պատվաստանյութերի մշակման գործընթացում սաղմնային բջիջների օգտագործման հետ կապված հարցեր կամ մտահոգություն ունեցող անձանց խնդրում ենք ուսումնասիրել սույն տեղեկատու-ձեռնարկի մեջ ներկայացված տեղեկատվությունը և պատվաստման վերաբերյալ որոշում կայացնելիս մտապահել հետևյալ նկատառումները.

- Որպեսզի մենք կարողանանք ճեղքել հիվանդության փոխանցման շղթան և պաշտպանել մեր համայնքը COVID-19-ից, անհրաժեշտ է, որ մեր հանրության մեծամասնությունը պատվաստվի վիրուսի դեմ:
- Պատվաստումը պաշտպանում է ոչ միայն ձեզ, այլ նաև կարող է պաշտպանել ձեր ընտանիքի անդամներին, ընկերներին և COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու վտանգի ներքո գտնվող մեր համայնքի առավել խոցելի անդամներին:
- COVID-19-ի դեմ պատվաստումների վտանգները և օգուտները տարբեր անձանց մոտ տարբերվելու են, և անձինք կարող են նախընտրել քննարկել այդ հարցը իրենց անձնական բժշկական ծառայություններ տրամադրողի հետ:
- Որոշ կրոնական և կենսաէթիկական խմբեր վերանայել և մեկնաբանել են COVID-19-ի դեմ ներկայիս պատվաստանյութերով պատվաստվելու Էթիկական նկատառումները: Այդ նկատառումներից շատերը ներկայացված են ստորև:
- Քանի դեռ պատվաստանյութերի պաշարը սահմանափակ է, ձեզ հնարավորություն չի տրվի ընտրելու, թե COVID-19-ի դեմ որ պատվաստանյութը կարող եք ստանալ:
- Որոշ անձինք գուցե ցանկանան անձնական գրույց ունենալ իրենց կրոնական առաջնորդի կամ կենսաէթիկայի ոլորտում փորձառու որևէ անձի հետ:

### Ինչու՞ են օգտագործվում սաղմնային բջիջներ պատվաստանյութեր պատրաստելու համար

Պատմականորեն սահմանված սաղմնային բջիջները ստացվել են 1960-ական և 1970-ական թվականներին՝ երկու ընտրովի հղիությունների ընդհատումներից և օգտագործվել են պատվաստանյութեր ստեղծելիս այնպիսի հիվանդությունների համար, ինչպիսիք են՝ հեպատիտ Ա-ն, կարմրախտը և կատաղությունը: Աբորտները, որոնցից ստացվել են սաղմնային բջիջները, ընտրովի էին և չեն իրականացվել պատվաստանյութերի մշակման նպատակով:

COVID-19-ի դեմ հնարավոր պատվաստանյութերից որոշների արտադրության համար օգտագործվող սաղմնային բջիջները ձեռք են բերվում երկու աղբյուրներից.

- HEK-293. Երիկամի բջջից, որն առանձնացվել է սաղմից 1973 թվականին ([չբացահայտված ծագում \(առաջացում\)](#)), կամ ինքնաբեր վիժումից, կամ հղիության կամավոր ընդհատումից)





- PER.C6. Ցանցաթաղանթային բջից, որն առանձնացվել է ընդհատված սաղմից 1985 թվականին

Ցանկացած պատվաստանյութի համար, որի հիմքում ընկած են պատմականորեն սահմանված այդ բջիջները, չեն պահանջելու և չեն իրականացնելու հղիությունների նոր ընդհատումներ (աբորտ):

Որոշ պատվաստանյութերի մշակման և արտադրման համար դեղագործական ընկերությունները նախապատվություն են տալիս մարդկային բջիջների շարքերը այլ բջիջներից, քանի որ 1) վիրուսների զարգացման համար անհրաժեշտ են բջիջներ, և վիրուսները հակված են ավելի լավ զարգանալու մարդկանց բջիջներում, քան կենդանիների (քանի որ դրանք վարակում են մարդկանց), 2) սաղմային բջիջները կարող են օգտագործվել ավելի երկար ժամանակով, քան բջիջների այլ տեսակներ, և 3) սաղմային բջիջները կարող են պահպանվել ցածր ջերմաստիճաններում՝ թույլ տալով գիտնականներին շարունակել օգտագործել տասնամյակների հնության բջիջներ: Չնայած սաղմային բջիջները կարող են օգտագործվել COVID-19-ի դեմ պատվաստանյութեր մշակելու կամ արտադրելու համար, պատվաստանյութերն իրենց մեջ **չեն պարունակում արհեստականորեն ընդհատված որևէ տեսակի սաղմային բջիջներ:** Մշակման փուլում գտնվող COVID-19-ի դեմ պատվաստանյութերի և հղիության արհեստական ընդհատման հետևանքով ստացված բջջային գծերի հետ ցանկացած առնչության համապարփակ ցանկը հասանելի է [այստեղ](#):

### Որտե՞ղ են մշակվել COVID-19-ի դեմ Pfizer և Moderna պատվաստանյութերը սաղմային բջիջների օգտագործմամբ

COVID-19-ի դեմ mRNA պատվաստանյութերը, որոնք արտադրվում են Pfizer-ի կամ Moderna-ի կողմից, **պատվաստանյութերի արտադրման համար չեն պահանջում որևէ սաղմային բջջային կուլտուրայի օգտագործում:**

mRNA պատվաստանյութի տեխնոլոգիայի մշակման սկզբնական փուլում սաղմային բջիջները օգտագործվել են որպես «ընդհանուր հասկացության ապացույց» (ցույց տալու, թե ինչպես բջիջը կարող է կլանել mRNA-ն և արտադրել SARS-CoV-2 S-սպիտակուց (spike protein)), կամ բնութագրելու SARS-CoV-2 S- սպիտակուցը:

Կյանքի պաշտպանության քաղաքականությամբ զբաղվող [Charlotte Lozier-ի հիստիտուտի](#) կողմից Pfizer և Moderna պատվաստանյութերը ճանաչվել են **Էթիկապես անվիճարկելի:** Ավելին՝ [Կյանքի Պաշտպանությանն Ուղղված Գործունեությունն Ծավալող Քարտուղարական Կազմը](#)՝ Կաթոլիկ Եպիսկոպոսների Միացյալ Նահանգների Համաժողովի շրջանակներում գործող կոմիտեն, հայտարարել է. «Ոչ Pfizer-ը, ոչ Moderna-ն պատվաստանյութի մշակման կամ արտադրության համար չեն օգտագործել հղիության արհեստական ընդհատումից ստացված բջիջների շարքեր: Սակայն, այդպիսի բջիջների շարքեր օգտագործվել են երկու պատվաստանյութերի արդյունավետությունը ստուգելու համար: Այսպիսով, չնայած որ պատվաստանյութերից և ոչ մեկը լիովին գերծ չէ հղիության արհեստական ընդհատումից ստացված բջիջների ցանկացած օգտագործումից, այս երկու դեպքերում այդ օգտագործումը շատ հեռու է հղիության արհեստական ընդհատման սկզբնական չարիքից... անձը կարող է մաքուր խղճով ստանալ





Կլինիկորեն խորհուրդ տրվող պատվաստանյութերից ցանկացածը այն համոզմունքով, որ նման պատվաստանյութերի ընդունումը չի ենթադրում անբարոյական համագործակցություն հղիության արհեստական ընդհատմանը»:

## Արդյո՞ք COVID-19-ի դեմ Johnson & Johnson (Janssen Pharmaceuticals) պատվաստանյութի մշակման համար օգտագործվել են սաղմային բջիջներ

Johnson & Johnson-ի կողմից արտադրվող ոչ վերարտադրողական վիրուսային վեկտորի պատվաստանյութը **պատվաստանյութը մշակելու և արտադրելու համար պահանջում էր սաղմային բջիջների կուլտուրաների օգտագործում, մասնավորապես՝ PER.C6:** Ե՛վ [Կաթոլիկ Եկեղեցին](#), և՛ [Էթիկայի և Կրոնի Ազատության Հարավային Բապտիստական Հանձնաժողովը](#) հայտարարել են, որ **բարոյապես ընդունելի է COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստանալը, որի մշակման կամ արտադրության համար պահանջվել են սաղմային բջիջներ:** [Կաթոլիկ Եպիսկոպոսների Միացյալ Նահանգների Համաժողովը](#) գնացել է ավելի հեռու և հայտարարել է. «COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստանալը պետք է ընկալվի որպես բարեգործություն մեր համայնքի մյուս անդամների հանդեպ: Այսպիսով, COVID-19-ի դեմ անվտանգ պատվաստումը պետք է համարվի մեզ շրջապատող անձանց հանդեպ սիրո գործողության և համընդհանուր բարօրության համար մեր բարոյական պատասխանատվության մաս ... Հաշվի առնելով այս ճգնաժամի հրատապությունը, հասանելի այլընտրանքային պատվաստանյութերի բացակայությունը և այն փաստը, որ տասնամյակներ առաջ իրականացված արհեստական ընդհատման և այսօր արտադրված պատվաստանյութի միջև կապը հեռակա է, այսպիսի պայմաններում COVID-19-ի դեմ նոր պատվաստանյութերով պատվաստումը կարող է լինել բարոյապես արդարացված»:

2021 թվականի Մարտի 2-ին Կաթոլիկ Եպիսկոպոսների Միացյալ Նահանգների Համաժողովը հայտարարություն տարածեց COVID-19-ի դեմ Johnson & Johnson's պատվաստանյութերի օգտագործման մասին: Եպիսկոպոսները [ևչեցին](#). «Եթե հնարավոր է ընտրություն կատարել COVID-19-ի դեմ հավասարապես անվտանգ և արդյունավետ պատվաստանյութերի շարքից, ապա պետք է ընտրվի այն պատվաստանյութը, որն ամենաքիչ առնչությունն ունի հղիության արհեստական ընդհատումից ստացված բջիջներին: Հետևաբար, եթե անձը հնարավորություն ունի ընտրելու պատվաստանյութ, ապա Johnson & Johnson- ի փոխարեն պետք է ընտրվեն Pfizer կամ Moderna պատվաստանյութերը... Չնայած մենք պետք է շարունակենք պնդել, որպեսզի դեղագործական ընկերությունները դադարեցնեն արհեստական ընդհատումից ստացված բջիջների օգտագործումը, բայց հաշվի առնելով այս համաճարակի հետևանքով ամբողջ աշխարհի կրած տառապանքները, մենք կրկին հաստատում ենք, որ պատվաստվելը կարող է լինել բարեգործություն, որը կծառայի համընդհանուր բարօրությանը»:

[Կաթոլիկ Եկեղեցին](#) նշել է՝ «Այն անձինք, որոնք, այնուամենայնիվ, խղճից դրդված հրաժարվում են հղիության արհեստական ընդհատումից ստացված սաղմային բջիջներից արտադրված պատվաստանյութից, այլ պրոֆիլակտիկ միջոցներով և համապատասխան վարքագիծ դրսևորելով պետք է անեն առավելագույն հնարավորը, որպեսզի չդառնան վարակի փոխանցման միջոց: Մասնավորապես, նրանք, ովքեր բժշկական կամ այլ պատճառներով չեն կարող





պատվաստվել, և ովքեր առավել խոցելի են, պետք է խուսափեն իրենց առողջությանն ուղղված ցանկացած վտանգից»:

### Որտե՞ղ Կարող Եմ Գտնել Տեղեկատվություն

Որոշ կրոնական խմբեր և կենսաբանական ինստիտուտներ, որոնք դեմ են պատվաստանյութերի մշակման կամ արտադրության մեջ հղիության արհեստական ընդհատումից ստացված սաղմնային բջիջների օգտագործմանը, նշել են, որ անհատները կարող են Էթիկապես ստանալ այս պատվաստանյութերը, եթե չլինեն Էթիկապես ստացված այլընտրանքներ:

Այս հարցի վերաբերյալ սույն խմբերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք հետևյալ կայքերը.

- [Ազգային Կաթոլիկ Կենսաբանական Կենտրոն](#)
- [Կյանքի Վերաբերյալ Հայտարարության Պապական Ակադեմիա](#)
- [Կաթոլիկ Եպիսկոպոսների Միացյալ Նահանգների Համաժողով](#)
- [Վատիկան – Հավատի Ուսմունքի Ժողով](#)
- [Հյուսիսային Դակոտայի Կաթոլիկ Համաժողով](#)
- [Charlotte Lozier-ի Ինստիտուտ](#)
- [Աջակցող Անձ – Կորոնավիրուսի պատվաստանյութի Կաթոլիկ բարոյականության հիմնական մեկնաբան:](#)

Վերարտադրված է Հյուսիսային Դակոտայի Առողջապահական [տեղեկատու-ձեռնարկից](#) Հյուսիսային Դակոտայի Առողջապահության Վարչության թույլտվությամբ:

